

111/90

1=

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԵՆ

ԿՈՒԼՏՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ




ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.

43 JUN 27


ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՅ՝

331.88

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԵՆ
ԿՈՒԼՏԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 75
ՅԵՐԵՎԱՆ 1928 թ.



11-23959 9p

ԿՈՒԼՏՆԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

(Տեղիումը յեզ կուլտանձնաժողովը. աշխատանքի բաշխումը կուլտնոսիայի անդամների միջեզ. աղիվի կազմակերպումը. կուլտնոսիայի աշխատանքի տեղեկան. կուլտնոսիայի բյուջեն)

1. Կուլտանձնաժողովը—տեղիումի ուժանդակ մարմինը—աշխատում է նրա հրանանդների համաձայն է նրա տնմիջական հսկողութան ներքո: Կուլտանձնաժողովի աշխատանքի ծրագիրն ու այդ աշխատանքի համար անհրաժեշտ միջոցները մտնում են տեղիումի աշխատանքի ծրագրի ու նախահաշվի մեջ է կազմում են նրանց մի մասը: Կուլտանձնաժողովն ամեն ամիս իր աշխատանքների մասին հաշիվ է տալիս տեղիումին:

2. Կուլտանձնաժողովը առանձին տեխնիքական ապարատ չունի է ոգտվում է տեղիումի տեխնիքական ապարատից. կուլտանձնաժողովը բացի իր նիստերի արձանագրութան մատչանից ուրիշ վոչ մի մատչան (նյութական հաշվետվութան է այլն)չի վարում: Իր աշխատանքների համար անհրաժեշտ միջոցները կուլտանձնաժողովն առհաշիվ ստանում է տեղիումի գրամարկից նրա նախահաշվով:

3. Կուլտանձնաժողովի գործունեյութան շրջանը շատ լայն է. կուլտանձնաժողովի ամենորյա գործնական աշխատանքը բաղմագան է է բարդ. վորպեսզի հաջողությամբ կատարի իր վրա գրված աշխատանքը, կուլտանձնաժողովը պետք է վորոշակի կերպով այդ ամբողջ աշխատանքը բաշխի իր առանձին անդամների միջև:

4. Կուլտիանձնաժողովի չուրաքանչյուր անդամ իրեն հասնաբարձ անհատանքի համար պատասխանատու չե ամբողջ կուլտիանձնաժողովի առաջ. կուլտիանձնաժողովի առանձին անդամների աշխատանքը համաձայնեցվում, շաղկապվում է կուլտիոմիսիայի նիստերում: Կուլտիանձնաժողովի նիստերը պետք է գումարվեն կանոնադր կերպով պահպանվող յերկու շաբաթը մեկ անգամ:

Կուլտիանձնաժողովի նիստերի միջանկյալ ժամանակաշրջանում ծագող բոլոր վիճելի հարցերը լուծվում է կուլտիոմիսիայի նախագահը, փորը հետո հաշիվ է տալիս կուլտիոմիսիայի նիստերում:

5. Նպատակահարմար է կուլտիանձնաժողովի աշխատանքների ասպարեզ գրավել նաև կոլլեկտիվի այն անդամներին, վորոնք կուլտիանձնաժողովի կազմի մեջ չեն մտել, սակայն ցանկութուն ունին ոգնելու կուլտիանձնաժողովին նրա աշխատանքի առանձին ասպարեզներում, և նրանց միջոցով ոգնել կուլտիոմիսիայի այն անդամներին, վորոնց վրա դրված են աշխատանքի առանձին ճյուղեր:

6. Տեղկոմի կողմից կուլտաշխատանքների համար հատկացվող միջոցները կազմվում են հավաքական պայմանագրերի համաձայն կատարվող հատկացումներից, տեղկոմի պահպանության համար ստացվող 1 տոկոսից գույացող միջոցների վորոշ մասից:

ԿՈՒԼՏԶԱՆԶՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

(Կուլտիանձնաժողովի տեխասանքի ծրագիրը. կուլտիանձնաժողովի սպասարկած կոլլեկտիվի պահանջների հաշվառումը)

1. Իր աշխատանքները հաջողությամբ ծավալելու համար կուլտիանձնաժողովը պետք է լավ մշակի իր աշ-

խատանքի ծրագիրը, իսկ այդ անելու համար անհրաժեշտ է հաշվառման չենթարկել, պարզել բանվորների ու ծառայողների առանձին խմբերի կուլտուրական պահանջները և նրանց կյանքի ու աշխատանքի պայմանների առանձնահատկությունները:

2. Կուլտիանձնաժողովի աշխատանքի ծրագիրը պետք է այնպես կազմել, վորպեսզի կոլլեկտիվի բազմազան կուլտուրական պահանջների բավարարումը որդանապես կապված լինի սոցիալիստական շինարարության խնդիրների պրոպագանդայի և այդ շինարարության գործնական աշխատանքները բոլոր տեսակետներից (քաղաքական, տնտեսական և արհեստակցական) բազմակողմանիորեն լուսաբանելու հետ: Այսպիսով կուլտիանձնաժողովի աշխատանքի ծրագրի մեջ պետք է մտցնել վոշ միայն այնպիսի ձեռնարկումներ, այնպիսի միջոցներ, վորոնք բավարարում են կոլլեկտիվի արդեն կազմակերպված պահանջներին, այնպես այնպիսի ձեռնարկումներ, վորոնք կոգնեն ամբողջ կոլլեկտիվին և նրա առանձին խմբերին ըմբռնելու և պարզելու այն հարցերը, վորոնց եյությունն ու նշանակութունը նրանք դեռ չեն գիտակցել:

3. Կուլտիանձնաժողովի աշխատանքի ծրագիրը կազմելիս պետք է ճիշտ կերպով հաշվի առնել այն ուժերն ու միջոցները, վորոնք կան կուլտիանձնաժողովի տրամադրության տակ: չպետք է աշխատել մեծ թվով ձեռնարկումներ կազմակերպել, այլ պետք է ամենից առաջ ապահովել կուլտիանձնաժողովի կողմից կազմակերպվող չուրաքանչյուր ձեռնարկումի վորակը:

4. Կուլտիանձնաժողովն իր սպասարկած կոլլեկտիվի պահանջները պետք է պարզի և հաշվառման չենթարկի իր առույթա գործնական աշխատանքների ընթացքում:

5. Պահանջների հաշվառման նպատակով կարող են ոգտագործվել հիտեյալ միջոցները. - Կուլտիանյնաժողովի

անդամների զրույցը կուլեկտիվի առանձին անդամների հետ, տեղկոմի անդամների ամենօրյա աշխատանքի ընթացքում կուտակված դիտողությունները, կուլտաշխատանքների վերաբերյալ զեկույցումներն ու հաշվետվությունները (վիճաբանություններ, նկատողություններ, առաջարկներ), ընթերցողին ուսումնասիրելու համար կիրարկվող բոլոր ձևերը, պատի թերթում գետեղվող բոլոր նյութերը (հոգ-վածներ, տեղեկություններ, լուրեր և այլն), կուլեկտիվի անդամների կողմից բանվորական ակումբները, կարմիր անկյունները և առանձին կուլտձեռնարկները հաճախելու վերաբերյալ տվյալները:

6. Բանվորների ու ծառայողների կուլտուրական պահանջների բնույթը սերտ կերպով կապված է նրանց աշխատանքի ու կենցաղի պայմանների հետ. ուստի բանվորների ու ծառայողների կուլտպահանջները հաշվի առնելիս պետք է ուշադրություն դարձնել նկատի առնել այն պահանջները, վորոնց մեջ աշխատում են կուլեկտիվի անդամները, արտադրական աշխատանքի բնույթը, նրանց նյութական դրույթունը, բնակարանային պայմանները, ժամանակի բյուջեն և կենցաղային այլ պարագաներ:

7. Պահանջների հաշվառման գործում վճռական դեր է կատարում վոչ այնքան՝ մեծ քանակությամբ նյութեր կուտակելը, վորքան նյութերի ոացիոնալ ոգտագործումը՝ անկախ նրանց քանակությունից, ամենաբնորոշ նյութերն ընտրելը, պարզ ու վորոշ կերպով աչգ նյութերը սխտեմատիկացրելու լենթարկելը և նյութերի ուշադիր ու լուրջ վերլուծությունը:

Նյութի կուտակման, ընտրության, սխտեմատիկացրելու և վերլուծության ամբողջ աշխատանքը դրվում է կուլտհանձնաժողովի անդամներից մեկի վրա, վորը իրեն կից կազմակերպում է հաշվառման լենթահանձնաժողով (մեծ հիմարկ-ձեռնարկություններում):

ԿՈՒԼՏՉԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՅԵՎ ԿԱՐԺԻՐ ԱՆԿՅՈՒՆԸ

1. Մի քանի կուլեկտիվների հեռու գտնվելու, շենքերի նեղվածության և այլ աննպաստ հանգամանքների պատճառով բանվորական ակումբները չեն կարողանում լիակատար չափերով սպասարկել միութենական մասսալին. ուստի՝ բանվորների ու ծառայողների ավելի լախ լավերի սպասարկելու նպատակով անհրաժեշտ է անմիջապես կուլեկտիվներին կից հիմնել կարմիր անկյուններ:

2. Կարմիր անկյունի աշխատանքը կազմակերպում և անմիջականորեն ղեկավարում է տեղկոմի կուլտհանձնաժողովը. վերջինի պարտականություններն են՝ գտնել և հատկացնել համապատասխան շենք, կանոնավորել անկյունը և ամրացնել նրա ֆինանսական միջոցները, հրապարակ քաշել նրա ակտիվը, կազմակերպել դրադարան, պատի թերթ, զրույցներ և այլն. (Մանրամասնությունները տես՝ Կուլտբաժնի տպված հրահանգում «Ինչպես պիտի աշխատեն կարմիր անկյունները»):

3. «... Սխալ և վնասակար կլիներ վորեւ շրջանակներով սահմանափակել կարմիր անկյունների աշխատանքը» — ահա ԽՍՀՄ Արհմիությունների VII-րդ համագումարի վորոշումը:

Սակայն չերբեք չպետք է մոռանալ, վոր անկյուններին հատկացված շենքերը փոքր են, նրանց միջոցները մեծ չեն, և նրանք անհրաժեշտ նյութական միջոցներ և տեղ չունին լախ չափերով ծավալելու իրենց աշխատանքը. ուստի պետք է անկյունների աշխատանքը զգուշությամբ ծավալել, աշխատելով ամենից առաջ տպահովել աշխատանքի վորակը:

4. Անհրաժեշտ է սխտեմատիկ կերպով հաշվառման լենթարկել կարմիր անկյունում կատարվող աշխատանքը:

կուլտիւնանձնաժողովները միայն այն ժամանակ կկարողանան ծավալել կարմիր անկյունների աշխատանքը և նրան կուլեկտիվի պահանջներին համապատասխան ընթացք տալ, չերբ ուշադրութեամբ հետևեն կարմիր անկյունում կազմակերպվող աշխատանքին, չերբ լավ դիտեն ու քննութեան առնեն այդ աշխատանքի արդշունքները:

5. Անկյունները իրենց աշխատանքի ընթացքում կարող են կապ հաստատել բանվորական ակումբների հետ՝ իրենց մասնաշաղկան աշխատանքների ասպարիզում նրանցից ոգնութիւն ստանալու նպատակով. ակումբների կողմից այդ ոգնութիւնը, սակայն, այնպիսի ձևով պետք է ցույց տրվի, վորպեսզի նրանք չսկսեն վարչականորեն դեկավարել անկյունների և կուլտիւնանձնաժողովների գործունեութիւնը:

ԿՈՒԼՏԶԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆԸ

(Աւելանալի առաւելին ձեվերի մեթոդիկան)

1. Կարմիր անկյունների աշխատանքի փորձը ցույց տվեց, վոր անկյուններում կարող են ոգտագործվել կուլտուր-կրթական աշխատանքի ամենաբազմազան ձևերը, ինչպես՝ գրույցներ, դասախոսութիւններ, բարձրաձայն ընթերցումներ, հարցերի ու պատասխանների չերեկոներ, տեղեկատու աշխատանք, թերթի վերաբերյալ աշխատանք, գրադարանային աշխատանք, ռադիո, ինքնագործունեութեան չերեկոներ, խմբակային աշխատանք և այլն:

2. Յուրաքանչյուր կարմիր անկյունում պետք է ոգտագործել կուլտաշխատանքի միայն այն ձևերը, վորոնք կարող են հետաքրքրութիւն առաջ բերել անկյան կողմից սպասարկվող կուլեկտիվի մեջ, և չեթե կուլտիւնանձնաժո-

ժողովը համապատասխան ուժեր ու միջոցներ ունի այդ ձևերի վորակապես բարձր իրագործման համար:

ԿՈՒԼՏԶԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԸ

1. «Ակումբի հիմնական նպատակն է — արմիութիւնների կարևորագույն լծակը հանդիսանալ՝ սոցիալիտական շինարարութեան կոնկրետ խնդիրների հիմքի վրա բանվորական մասնանների քաղաքական ու կուլտուրական մակարդակը բարձրացնելու և պրոլետարական հասարակականութեանը զարկ տալու գործում» (ԽՍՀՄ արմիութիւնների V]1-րդ համագումարի՝ կուլտաշխատանքների վերաբերյալ բանաձևից):

2. Ակումբի ամբողջ աշխատանքի մեջ պետք է մեծ շափով լուսաբանվեն ընդհանուր քաղաքական, արմիութենական և ժողովրդական լուսավորութեան ու կենցաղի վերաբերյալ այն ընթացիկ ու հիմնական հարցերը, վորոնք ամենից ավելի մոտ են բանվորների ու աշխատողների շահերին և պահանջներին:

3. Արհշարժման հարցերի նկատմամբ ցույց տրվող և հետզհետե աճող հետաքրքրութիւնը, արհաշխատանքի գործնական հարցերի լուծմանն ավելի մեծ թվով բանվորների մասնակցութեան փոստը և միութեան ջարային անդամի ակտիվութեան խորացումը, այս ամենը նպաստավոր հող է ստեղծում արհպրոպագանդի զարգացման համար: Այս պարագաներում արհպրոպագանդի հաջողութիւնը կախված է միութենական կուլտմարմինների և ակումբների վարչութիւնների չեռանդից և անհրաժեշտ ուշադրութիւնից:

4. Անընդհատ աճում է բանվորների հետաքրքրութիւնը դեպի արտագրական հարցերը, և այս հանգաման-

քը «պահանջում եմ մեծ ուշադրություն դարձնել ա-
կումբներում դեպի արտադրական լուսավորությունը,
հատկապես մասսայական աշխատանքի ասպարեզում (դա-
սախոսություններ, զեկուցումներ, դիսպուտներ և այլն):

5. Նկատի ունենալով միության անդամների (հատ-
կապես չերիտասարդության) հսկայական ձգտումը դեպի
ինքնակրթությունը, ակումբները պետք է այսուհետև
խմբակների պարապմունքները վարեն ինքնակրթական
աշխատանքի մեթոդներով, միության անդամներին
կոնսուլտացիոն լայն ոգնություն ցույց տալու, խմբակ-
ներին համապատասխան ծրագրեր ու դրականություն մա-
տակարարելու և գրադարանները ինքնակրթության խնդիր-
ներին համապատասխան դրժերով լրացնելու միջոցով:

6. Ակումբների կյանքի ելական կողմերից մեկն է—
հանգիստ և խելացի զվարճություն կազմակերպելը. ան-
հրաժեշտ է ակումբներում հանգստի համար համապատաս-
խան պայմաններ ստեղծել, անհրաժեշտ է ամեն ուր հոգ
տանել ակումբների շենքերի արտաքին տեսքը բարելավե-
լու, գեղարվեստական ու ընտանեկան չերեկույթների հա-
տուկ ծրագրեր մշակելու և միության անդամների առան-
ձին խմբերի ու կուլեկտիվների պահանջները բավարարե-
լու մասին: Ինքնագործունյա ակումբային կուլեկտիվների
գեղարվեստական աշխատանքի վորակի բարձրացումը—
ամենակենսական հարցերից մեկն է այդ ասպարեզում:

7. Ակումբներին անդամակցելու արժեքն ու կարե-
վորությունը բարձրացնելու նպատակով, ակումբների
կողմից ցույց տրվող կուլեկտիվ զեկավարությունն ուժե-
ղացնելու և ակումբային լայն ղեմկրատիա ծավալելու
համար անհրաժեշտ է.

ա) ակումբների հիմնական անելիքը համարել ամե-
նամեծ չափերով ակումբի անդամներին ու նրանց ընտա-
նիքներին սպասարկելը.

բ) ել ավելի մեծ չափերով մասնակից դարձնել ա-
կումբների անդամներին ակումբների զեկավար աշխա-
տանքներին՝ կանոնավոր կերպով ընդհանուր ժողովներ
հրավիրելով և նրանց քննությունն ու լուծմանը առաջար-
կելով վոչ միայն հաշվետվական բնույթի հարցերը, այլ նաև
ակումբային կյանքի առանձին հիմնական հարցերը.

գ) ակումբների վարչությունների աշխատանքի աս-
պարեզում աշխատել խորացնել կուլեկտիվ զեկավարու-
թյունը՝ վարչության բոլոր անդամներին ակմբի ամենոր-
շա աշխատանքներին մասնակից անելու միջոցով:

դ) ակումբների միջոցներն առանձնացնել միութենա-
կան միջոցներից և ակումբների վարչություններին իրա-
վունք տալ ինքնարուժն կերպով ծախսելու հատկացված
միջոցները, համաձայն միութենական կազմակերպության
կողմից հաստատված նախահաշվի. կանոնավորել անդամա-
վճարների գանձումը, ակումբի անդամներին ներշնչելով
այն միտքը, վոր անդամավճարը ակումբի ֆինանսական
միջոցների վորոշ մասն է կազմում. ուժեղացնել ակումբ-
ներին կից վերստուգիչ հանձնաժողովների գործունեու-
թյունը:

8. Ներակմբային միավորությունների հիմնական ձե-
վերը պետք է համարել հանձնաժողովները և խմբակները
(զրքի բարեկամների, ռադիո սիրողների և այլն):

9. Կուլտհանձնաժողովները իրենց կուլեկտիվին ավե-
լի լիակատար չափերով սպասարկելու նպատակով պետք
է սերտ կապ ստեղծեն մոտակա ակումբի հետ. տեղկոմի
կուլտհանձնաժողովը ակումբի ակտիվ անդամներից մեկին
առանձնացնում և կարգում է տեղկոմի և ակումբի փոխա-
դարձ կապի լիազոր: Կապի լիազորների պարտականու-
թյունն է 1) կուլեկտիվին ինֆորմացիոն տեղեկություն-
ներ հաղորդել ակմբի աշխատանքների մասին, 2) ակմբի

անդամներին բաշել ակտիվ աշխատանքի ասպարեզ, 3) ակմբի նոր անդամներ գրավել, 4) հաշվառման յնթաբ-
կել կոլեկտիվի անդամների մասնակցութունը ակմբի աշ-
խատանքներին, 5) ակմբի վարչությանը խնդրմացիա-
տալ իր կոլեկտիվի ցանկութունների մասին, 6) ստա-
նալ և բաշխել դասախոսութունների, ներկայացումների
և այլ տոմսերը, 7) ամեն կերպ աջակցել ակմբի աշխա-
տանքի ծավալմանը:

ԿՈՒՆՏԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ը ՅԵՎ ԻՆՔՆՈՋԱՐ- ԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. «... ինքնազարգացման աշխատանքն ամբողջովին
կառուցվում է կամավորության հիմունքներով և անհատա-
կան պահանջների ու ընդունակութունների համեմատ»:

2. Միութենական մարմինների կողմից ինքնազար-
գացման խմբակներին և անհատներին ցույց տրվող ոգ-
նության հիմնական ձևերը պետք է լինեն. —

ա) ինքնազարգացմամբ զբաղվողներին ապահովել լավ
ծրագրերով ու գրականության հանձնարարելի ցուցակնե-
րով:

բ) ինքնազարգացմամբ զբաղվողներին տալ կազմա-
կերպչական-մեթոդական ցուցմունքներ, հրահանգներ և
այլն:

գ) արտոնյալ պայմաններով անհրաժեշտ դրականու-
թյուն մատակարարել պարապմունքների համար:

դ) խմբակների համար ղեկավարներ հանձնարարել,
հետազայում ուղղություն տալով նրանց աշխատանքին:

յե) բանավոր և գրավոր խորհուրդներ տալ խմբակ-
ներին ու անհատ սլարապոդներին նրանց պահանջների
համեմատ:

զ) ստուգել և կարծիք հայտնել խմբակների գրավոր
աշխատանքների մասին:

ե) կազմակերպել ինքնազարգացման վերաբերյալ
հատուկ եքսկուրսիաներ:

ԿՈՒՆՏԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ը ՅԵՎ ԱՐԶՄԼՈՒՍԱ- ՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Միության ամբողջ կյանքն ու ամբողջ պրակտիկ
գործունեությունը կառուցվում է միության բոլոր ան-
դամների կողմից գործուն աշխատանքի վրա:

Միութենական աշխատանքի հաջողութունը պայմա-
նավորված է միության անդամների զիտակից վերաբեր-
մունքով դեպի միության խնդիրները և միութենական
գործնական աշխատանքը: այս իսկ պատճառով անհրա-
ժեշտ է արհիւսավորության գործը սիստեմատիկորեն
կազմակերպել, «անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրութամբ
վերաբերվել դեպի միութենական կուլտաշխատանքի այդ
նյութը»:

2. «Մասնաշաղկան արհիւսավորությունը ըստ իր
բովանդակության պետք է ամենասերտ կերպով շաղկապ-
ված լինի արհշարժման ընթացիկ հարցերի հետ: այդ
նպատակով անհրաժեշտ է ամենալրիվ չափերով ոգտագոր-
ծել միութենական մամուլը („Труд, Весник Труда“
«Աշխատանք») նրա եջերում հարուցված տուանձին հար-
ցերը հավաքական կերպով քննության առնելու, համա-
պատասխան դիսպուտներ, գեկուցումներ կազմակերպե-
լու համար և այլն»:

3. Արհիւսավորական աշխատանքների ասպարեզ
ավելի մեծ թվով աշխատակիցներ զրավելու նպատակով
անհրաժեշտ է նաև լուրջ ոգնություն ցույց տալ ինքնա-
զարգացման աշխատանքին:

4. Բանվորների ու ծառայողների կուլտուր-քաղաքական անընդհատ աճման պայմաններում արհեստավորության գործի համար վճռական նշանակություն է ստանում արհարուպագանդիստների (դասընթացների, խմբակների, դեկավարներ և այլն) վորակի հարցը. ուստի այժմ առանձին կարևորություն ունի արհարուպագանդիստների խիստ, ուշադիր ընտրության և նրանց վերադիր սխտեմաարկ կերպով բարձրացնելու հարցը:

ԿՈՒԼՏՈՒՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՅԵՎ ԿՈՒԼՏԱԾԽԱՏԱՆՔԻ ՄՅՈՒՍ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Կուլտաշխատանքի կարևորագույն բնագավառներից մեկը եքսկուրսիաներն են, վորոնք նպաստում են բանվորների ու ծառայողների ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը և նրանց հնարավորությունն են տալիս առողջ հանգիստ վայելելու:

Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել տեղական եքսկուրսիաներ կազմակերպելու վրա, նկատի առնելով, վոր նրանց միջոցով բանվորներն ու ծառայողները ծանոթանում են իրենց յերկրին, նրանք հանգստի լավագույն միջոցն են հանդիսանում և շատ մատչելի լին բանվորների ու ծառայողների լալն խավերին:

2. Կուլտաշխատանքի ասպարիզում մեծ դեր պետք է խաղա ֆիզկուլտուրան, վորպես բանվորներին ֆիզիքսպես թարմացնող, առողջացնող միջոց, վորպես միութենական մասսաների դաստիարակության և պրոֆեսիոնալ միաձուլման միջոցներից մեկը: Անհրաժեշտ է լալն չափերով ծավալել միութենական մարմինների ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքն ալդ ուղղությամբ և միջոցներ ձեռք առնել ու աշխատել ֆիզկուլ-

տուրայի պարամունքներին մասնակից դարձնել վոյմիան յերիտասարդությանը, ալ նաև հասակավորներին, վորոնք մինչև այժմ շատ թույլ ակտիվություն են հանդես բերել դեպի ֆիզկուլտուրան:

«Ֆիզիքսական կուլտուրան պետք է կազմի ակումբների աշխատանքի ծրագրի մի բաղադրիչ մասը, և ալդ գծով պետք է կազմակերպվի բացոթյա հանգիստ թե մատր և թե ձմեռ» վորտքով մասսայական զբոսանքներ, եքսկուրսիաներ, ճանապարհորդական շրջագայություններ կատարելու միջոցով:

3. Ֆիզկուլտուրայի աշխատանքները ճիշտ և կանոնավոր հիմքերի վրա դնելու նպատակով անհրաժեշտ է կազմակերպել պարտադիր բժշկական վերահսկողություն խմբակներում ֆիզկուլտուրայով զբաղվողների նկատմամբ, ինչպես նաև ստեղծել ինքնահսկողություն և լալն չափերով ոգտագործել բժշկական խորհուրդներն ու ցուցմունքները ֆիզկուլտուրայի հարցերի վերաբերմամբ:

«Ունընդհատ աճում է «բանվորական մասսաների կուլտնւրական սպասարկության գործում ռադիոյի նշանակությունը...» Անհրաժեշտ «ավելի մեծ ուշադրությամբ վերաբերվել դեպի ռադիո-աշխատանքը», ավելի ծավալել ռադիո-գիտելիքներն ու ռադիո-սիրողների ցանցը (խմբակների, մամուլի և զեկուցումների միջոցով) և ոգնություն ցույց տալ ակումբներին ու կոլլեկտիվներին ռադիո-ապարատներ ձեռք բերելու գործում:

4. «Բանվորները հետեզհետե ավելի մեծ հետաքրքրությամբ են վերաբերվում դեպի կինոն, վորի նշանակությունը մեծանում է միութենական կուլտաշխատանքի սխտեմի մեջ, ուստի միությունը պետք է ուշադիր կերպով վերաբերվի և ոգնի աշխատանքի ալդ տեսակի զարգացմանը:

Անհրաժեշտ է ոգտագործել կինոն մի շարք մասսայական ձեռնարկումներ կիրառելիս, համարելով այդ մասնների գեղարվեստական դաստիարակության և հանգստի մի միջոց»:

5. Անհրաժեշտ է աշակցել «շախմատի զարգացմանը միութենական կուլտաշխատանքի ընդհանուր սիստեմի մեջ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել շախմատի խաղի մասսայական ձևերի զարգացման վրա (սեանսներ, տուրնիրներ):



22.5
ԳԻՆԸ 15 ԿՈՊԵԿ

1958թ.

11

23959

1000